



**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**  
**ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ**

**Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն Թ Ի Վ 5**

**ԵՊՀ-Ի ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԽՈՐՀՐԴԻ՝  
2018 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԻ**

*Օրակարգում՝*

1. 2018-19 ուստարվա առաջին քննաշրջանի նախապատրաստական աշխատանքների մասին (զեկ. Ա. Սարգսյան):
2. Կուրսատորների կատարած աշխատանքների հաշվետվությունը:
3. Պետական պարգևատրումների ներկայացվող պրոֆեսորադասախոսական անձնակազմի թեկնածուների հաստատում:
4. Ֆակուլտետային ՈԻԳԸ նախագահի տեղեկատվությունը կատարվելիք աշխատանքների մասին. առաջարկություններ, պահանջվող չափանիշներ:
5. Հայոց լեզվի պատմության ամբիոնի վարիչի հաշվետվությունը:
6. Ընթացիկ հարցեր (հայոց լեզվի լինգվաֆոնային լսարանի հիմնման հարցի քննարկում):

Սկսելով գիտական խորհրդի նիստը՝ հայ բանասիրության ֆակուլտետի դեկան պրոֆ. Ա. Ավագյանը իր խոսքի սկզբում տեղեկացրեց, որ գիտխորհրդի 36 անդամներից այս պա-

հին նիստին մասնակցում է 31-ը, և ապահովված է անհրաժեշտ քվորումը: Նա այնուհետև ընթերցեց նիստի օրակարգը, որը հաստատվեց միաձայն քվեարկությամբ:

**Օրակարգի 1-ին՝** 2018-19 ուստարվա առաջին քննաշրջանի նախապատրաստական աշխատանքների **հարցի** մասին զեկուցեց հայ բանասիրության ֆակուլտետի դեկանի տեղակալ դոց. Ա. Սարգսյանը: Նա մասնավորապես ասաց, որ հաջողությամբ ավարտվել են միջանկյալ գրավոր քննությունները, չեն նկատվել խախտումներ, իսկ այժմ նախապատրաստական աշխատանքներ են տարվում՝ ամանորյա արձակուրդներից անմիջապես հետո բնականոն անցկացնելու բանավոր քննաշրջանը:

Հարցի առիթով այնուհետև ելույթ ունեցավ պրոֆ. Ա. Ավագյանը: Ընդհանուր առմամբ դրական գնահատելով 2018-19 ուստարվա առաջին քննաշրջանի միջանկյալ գրավոր քննությունների արդյունքները՝ նա, սակայն, մատնանշեց նկատվող որոշ թերություններ, այն է՝ քննության ընթացքի հսկողության անկատարությունը՝ դրանից բխող բացասական հետևանքով՝ անհավասար պայմանների ստեղծմամբ: Դեկանը պահանջեց հետայսու է՛լ ավելի ճկուն դարձնել հսկողությունը, հետևել նաև յուրաքանչյուր տետրում քննական համապատասխան տոմսի առկայությանը:

**Օրակարգի 2-րդ հարցը** վերաբերում էր կուրատորների կատարած աշխատանքների հաշվետվությանը:

Նախ՝ ելույթ ունեցավ կուրատորներից առաջինը՝ ընդհանուր լեզվաբանության ամբիոնի դոցենտ **Աշոտ Հայրապետյանը**: Վերջինս իր ելույթում ասաց հետևյալը.

- Ստանձնելով հայ բանասիրության ֆակուլտետի 2018-2019 ուստարվա առկա ուսուցման 1-ին կուրսղեկի պարտականությունը՝ կատարել եմ հետևյալ աշխատանքները.

**1-ին** կիսամյակում.

1. ծանոթացրել եմ համալսարանում գործող կանոնակարգերին և ավանդույթներին,
2. ուսանողների իրավունքներին և պարտականություններին,
3. խրախուսել եմ ուսանողներին՝ մասնակցելու ֆակուլտետում և համալսարանի շրջանակներում կազմակերպվող միջոցառումներին և, հատկապես, գիտաժողովներին,

4. պարբերաբար հանդիպել եմ ուսանողների հետ, խորհրդատվությամբ օգնել նրանց՝ լուծելու կրթական գործընթացում առաջացած խնդիրները, ուղղորդել մասնագիտական խորհուրդներով,

5. սեպտեմբեր ամսին այցելել ենք ԵՊՀ-ի գրադարան. ծանոթացել բանասպիրությանը հատուկ հիմնարար գրականությանը և բառարանային ֆոնդին,

6. մի խումբ ուսանողների հետ այցելել ենք Հովհաննես Այվազովսկու կտավների ցուցահանդես՝ կազմակերպված Հայստանի պատմության թանգարանում,

7. փորձել եմ ծանոթանալ նաև ուսանողների սոցիալական ու անձնական խնդիրներին և հնարավորինս սատարել նրանց:

Հաջորդ կիսամյակում նախատեսում ենք այցելել.

ա) Եղ. Չարենցի տուն-թագարան,

բ) Էջմիածին՝ ծանոթանալու պատմամշակութային հուշարձաններին,

գ) Օշական՝ այցելություն հայ ուսուցչապետի գերեզմանին:

Իր հաշվետվության մեջ հաջորդ կուրստորը՝ հայոց լեզվի պատմության ամբիոնի դասախոս **Վիկտորյա Մուրադյանը**, զեկուցեց հետևյալը.

- Այս ուսումնական տարի կուրստոր եմ առկա բաժնի 1-ին կուրսի առաջին խմբում:

Այս կիսամյակի ընթացքում որպես ուսումնական խորհրդատու աշխատել եմ հետևյալ ուղղություններով.

1. Տարվա սկզբին կազմակերպվել է այցելություն ԵՊՀ գրադարան, ուսանողները ծանոթացել են գրադարանից օգտվելու, գրքեր պատվիրելու և առձեռն ֆոնդից օգտվելու կանոններին, ծանոթացել են այն բաժիններին, որոնք առկա են գրադարանում:

2. Մշտական հանդիպումներ եմ ունենում ուսանողների հետ չորեքշաբթի օրերին, հանդիպումները նշանակված են 10:00-ին: Ներկայացրել եմ ուսանողի իրավունքներն ու պարտականությունները: Լինելով 1-ին կուրսի ուսանողներ՝ նրանք բավական շատ տեղեկատվության կարիք ունեն: Տարբեր հարցերի շուրջ կազմակերպել եմ քննարկումներ, պազաբանել նրանց հետաքրքրող տարբեր հարցեր:

3. Ընթացիկ քննությունների շրջանում հանդիպում եմ երկու անգամ՝ քննաշրջանից առաջ և հետո: Քննություններից առաջ խորհուրդներ եմ տալիս՝ հատկա-

պես լեզվական առարկաների հետ կապված, ուղղորդում նրանց անհանգստացնող հարցերում: Քննություններից հետո նրանց հետ ամփոփում եմ քննաշրջանի արդյունքները: Աշխատում եմ ուսանողներին ներգրավել ֆակուլտետային գիտական և ճանաչողական միջոցառումներում, նրանց մեծ մասը նոյեմբերի 30-ին մասնակցել է հայոց լեզվի պատմության ամբիոնի կազմակերպած <<Աբեղյանական ընթերցումներ>> ամենամյա հանրապետական գիտաժողովին՝ որպես ունկնդիր, որից հետո կազմակերպել ենք փոքրիկ քննարկում նրանց հետաքրքրող հարցերի շուրջ:

**Օրակարգի 3-րդ՝** պետական պարգևատրումների ներկայացվող պրոֆեսորադասախոսական անձնակազմի թեկնածուների հաստատման **հարցի** առիթով գիտական խորհրդում ծավալվեցին մտքերի աշխույժ քննարկումներ: Ելույթ ունեցողները հիմնականում հավանություն տվեցին ԵՊՀ-ի 100-ամյա հոբելյանին ընդառաջ ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական անձնակազմի թեկնածուների ցուցակին, իսկ ոմանք (պրոֆ. Յու. Ավետիսյան, դոց. Թ. Տոնոյան և այլք) կատարեցին որոշ դիտողություններ և հայտնեցին իրենց նկատառումները: Գիտական խորհուրդը որոշեց պետական պարգևատրումների ներկայացվող անձնակազմի ցուցակը ևս մի անգամ համաձայնեցնել ամբիոնների վարիչների հետ, ապա նոր ներկայացնել ԵՊՀ-ի ռեկտորատ:

**Օրակարգի 4-րդ հարցի՝** ֆակուլտետային ՈԻԳԸ նախագահի տեղեկատվությունը կատարվելիք աշխատանքների մասին. առաջարկություններ, պահանջվող չափանիշների առիթով ելույթ ունեցան ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի ուսանողական գիտական ընկերության նախագահ **Ս. Եղիազարյանը** և գիտղեկավար **Ա. Տեր-Մինասյանը**: Նրանք հանգամանալից ներկայացրին իրենց կատարած աշխատանքները, արտահայտեցին որոշ մտահոգություններ դրանց կատարման ընթացքում առաջացող խնդիրների վերաբերյալ: Գիտական խորհուրդը դրական գնահատեց ֆակուլտետային ՈԻԳԸ կողմից աղյուսակի տեսքով ներկայացված հետևյալ հաշվետվությունը.

№	Միջոցառման բնույթը	Խորագիրը/Թեման	Անցկացման օրը	Համառոտ նկարագրությու նը

1.	Գիտաճանաչողական այց	Կոմիտասի անվան պանթեոն	03.09.2018	Առաջին կուրսեցիների առաջին դասն անցկացվում է պանթեոնում, որի ընթացքում դասախոսությ
2.	Ճանաչողական հանդիպում	Ինչ է ՈՒԳԸ-ն	13.09.2018	Առաջին կուրսեցիների ներկայացվեց ՈՒԳԸ կառուցվածքը, կանոնադրությունը,
3.	Մեմինար-քննարկում	<Մեր սիրելի Ազնավուրը>	4.10.2018	Ազնավուրի հիշատակին նվիրված մեմինար-քննարկումների ընթացքում, ուսանողները ներկայացրին նրա կենսագրությունը, հայտնի ու անհայտ պատմություններ նրա մասին: Ընդհանուր

4.	Գիտաճանաչողական այց-սեմինար	Սերգեյ Փարաջանով	24.10.2018	Այց Սերգեյ Փարաջանովի տուն-թանգարան, Փարաջանովի պատմվածքների քննարկում
5.	Դասախոսություն	«Բարբառագիտական ընդհանուր ակնարկ»	25.10.2018	«Բարբառագիտական ուսումնասիրություններ» ծրագրի շրջանակում առաջինը դասը
6	Դասախոսություն	«Կարևո բարբառը»	26.10.2018	Բարբառագիտական ուսումնասիրությունների համար անհրաժեշտ երկրորդ դասը

7.	Այց Գյումրի	«Բարբառագիտական ուսումնասիրություն»	28.10.2018	Այցի ընթացքում մեր խումբը շրջեց տարբե գյուղերով և վերցրեց հարցազրույցներ տարբեր տարիքի մարդկանցից,
8.	Գիտական ուսումնասիրություն	«Կարնո բարբառի ներկայիս վիճակը»	5.11.2018	Կատարվեց ձայնագրված նյութեր հիման վրա կազմված գրավոր նյութերի համեմատություն իմ անդամների մեջ և
9.	Դասախոսություն	«Կուրթան»	14.11.2018	Բարբառագիտական ուսումնասիրություն ի համար անհրաժեշտ երրորդ դասը
10.	Այց Վանաձոր և հարակից գյուղեր	«Բարբառագիտական ուսումնասիրություն»	18.11.2018	Այցի ընթացքում մեր խումբը վերցրեց հարցազրույցներ տարբեր տարիքի մարդկանցից, ձայնագրեց դրանք

11.	Ինտելեկտուալ խաղ-մրցույթ	«Գուշակիր գրողին»	26.11.2018	Մի քանի փուլից բաղկացած խաղ, որի նպատակն է ուսանողներին ծանոթացնել հայտնի գրողներին,
12.	Սեմինար	Շատերին անհայտ փաստեր Վիլիյամ Սարոյանի մասին	3.12.2018	Վիլյամ Սարոյանի 110-ամյակին նվիրված սեմինար, որի ընթացքում ուսանողները կներկայացնեն հետաքրքիր, բազմաթիվ փաստեր
13.	Գիտական ուսումնասիրություն	«Բարբառագիտական ուսումնասիրություն»	5.12.2018	Կատարվեց ձայնագրված նյութերի հիման վրա կազմված գրավոր նյութերի համեմատություն իմ անդամների մեջ և համեմատություն նախկինում եղած ձևերի հետ
14.	Դասախոսություն	«Արարատյան բարբառ»	11.12.2018	Բարբառագիտական ուսումնասիրությունների համար անհրաժեշտ չորրորդ դասը



15.	Հանդիպում-քննարկում	«Ով է Աստծո նման»	25.10.2018	Հանդիպում հեղինակ հետ, որտեղ քննարկումնան նրա «Ով է Աստծո նման» գիրքը: Հանդիպմանը կից թեյախմություն էր:
16.	Այց Արտաշատ	«Բարբառագիտական ուսումնասիրություններ»	16.12.2018	Այցի ընթացքում մեր խումբը վերցրեց հարցազրույցներ տարբեր տարիքի մարդկանցից, ձայնագրեց դրանք

**Օրակարգի 5-րդ հարցի** առիթով (հայոց լեզվի պատմության ամբիոնի վարիչի հաշվետվությունը) ելույթ ունեցավ հայոց լեզվի պատմության ամբիոնի վարիչ պրոֆ. Ա. Աբաջյանը: Նա նկատեց հետևյալը.

- Հայոց լեզվի պատմության ամբիոնում իրենց գիտակրթական գործունեությունն են իրականացնում 11 անդամներ՝ 1 պրոֆեսոր, 4 դոցենտ, 6 ասիստենտ: Հայտնի պատճառներով մեր ամբիոնի ծանրաբեռնվածությունը այս ուսումնական տարում նույնպես պակասեց՝ ութից հասնելով վեց դրույքի /1 դրույք -1հոգի, 0,75 դրույք-5 հոգի, 0,5 դրույք – 1 հոգի, 0,25 դրույք -4 հոգի/:

Ս/թ. հունիսին ամբիոնի հեռակա ասպիրանտ Վանուհի Բաղմանյանը պաշտպանեց թեկնածուական ատենախոսություն՝ «Ն. Ադոնցի լեզվաբանական ժառանգությունը» թեմայով: Պաշտպանության է պատրաստ նաև ամբիոնի առկա ասպիրանտ Թամարա Պողոսյանի ատենախոսությունը: Այժմ ամբիոնն ունի հեռակա 2 ասպիրանտ, 2 հայցորդ :

Հայոց լեզվի պատմության ամբիոնի աշխատակիցները հաշվետու տարում զբաղվել են գրաբարի, միջին հայերենի, բարբառագիտության, հայոց լեզվի պատմության հիմնա-

հարցերի ուսումնասիրությամբ և այդ գիտակարգերին վերաբերող դասընթացների մշակմամբ ու կատարելագործմամբ, անշուշտ նաև գիտահետազոտական աշխատանքով:

Հայոց լեզվի պատմության ամբիոնի՝ երկար տարիների ընթացքում ստեղծված գիտական, կրթական հիմնարար ավանդույթները պահպանվել և շարունակվում են այժմ:

Հաշվետու ժամանակաշրջանում վերանայվել է հայոց լեզվի պատմության ամբիոնի դասընթացների մեծ մասը, թարմացվել են միջանկյալ և ավարտական քննությունների հարցաշարերը: Վերջապես այս ուստարում լեզվի պատմության և ընդհանուր լեզվաբանության ամբիոնները համատեղ ունեցան մագիստրոսական կուրս:

Նշված ժամանակահատվածում հայոց լեզվի պատմության ամբիոնը կազմակերպել է մի շարք գիտաժողովներ, միջոցառումներ: Համառոտ դրանց մասին..

1. Փետրվարին՝ արդեն երրորդ տարին անընդմեջ, ամբիոնը կազմակերպել է գրաբարի օլիմպիադա, որին մասնակցել են ուսանողներ ոչ միայն հայ բանասիրության, այլև աստվածաբանության, արևելագիտության ֆակուլտետներից, լավագույններին պարգևատրել գրքերով:
2. 2018 ամռանը ամբիոնը ՀՀ գիտության պետական կոմիտեի աջակցությամբ կազմակերպել էր «Երիտասարդ գիտնականների դպրոց» հանրապետական գիտաժողով՝ «Հայոց լեզու. Մաշտոցից մինչև մեր օրերը» խորագրով, որի նպատակն էր հանրապետության երիտասարդ գիտնականներին, մագիստրոսներին աջակցելը գիտահետազոտական աշխատանքներ կատարելիս:
3. Հունիսին Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի կազմակերպած Ջահուկյանական միջազգային գիտաժողովին զեկուցումներով հանդես են եկել Ա. Աբաջյանը, Ս. Գրիգորյանը, Ն. Պարոնյանը, Ն. Դիլբարյանը, Ա. Խաչատրյանը:
4. Ն. Դիլբարյանը և Ա. Խաչատրյանը 2018 թ. մայիսին զեկուցումներով հանդես են եկել Համազգային հայ կրթական և մշակութային միության, ԵՊՀ-ի և ՀՀ ԳԱԱ –ի կազմակերպած «Կրթամշակութային կյանքը Հայաստանի առաջին հանրապետության տարիներին» խորագրով գիտաժողովում, իսկ վերջերս՝ նոյեմբերի 10-11-ին, Մոսկվայում «Հայոց մշակույթի ոսկե դարը» միջազգային գիտաժողովին նույն հեղինակները կարդացել են զեկուցումներ, որոնց թեզիսներն արդեն տպագրված են:

5. Ամբիոնի և ֆակուլտետի ՈւԳԸ-ի՝ մասնավորապես նրա նախագահ Սամվել Եղիազարյանի եռանդուն ջանքերով ստեղծվել է բարբառագիտական ուսումնասիրությունների կենտրոն, որի գործունեության ծրագիրը հաստատվել և ֆինանսավորվում է ԵՊՀ ղեկավարության կողմից: Ս/թ հոկտեմբերին կազմակերպվեց գրավոր մրցույթը նտություն, որի արդյունքում բարձր միավորներ հավաքած 20 ուսանողներ այժմ մասնակցում են բարբառագիտական արշավներին /արդեն եղել է 3 ուղևորություն Գյումրի, Վանաձոր և Արտաշատ/: Ուսումնասիրությունների արդյունքները կամփոփվեն ուսանողների կողմից գրվելիք գիտական հոդվածներում: Նշենք, որ նախքան ուղևորության մեկնելը բարբառագիտական խումբը արտաժամյա լսել է մի քանի դասախոսություններ, նախապատրաստվել հավուր պատշաճի: Ծրագիրը ղեկավարում են պրոֆ. Ա. Աբաջյանը և դոց. Ս. Գրիգորյանը:
6. 2018թ. հոկտեմբերի 8-ին կայացավ պրոֆեսոր Մանվել Ասատրյանի անվան լսարանի բացումը, որի վերանորոգումը կազմակերպել և ֆինանսավորել էր ամբիոնի վարիչ Ա. Աբաջյանը:
7. 2018 թ. նոյեմբերի 29-ին հայոց լեզվի պատմության ամբիոնը հայոց լեզվի ամբիոնի հետ կազմակերպել էր «Աբեղյանական ընթերցումներ» հանրապետական 3-րդ գիտաժողովը, որտեղ զեկուցումներով հանդես եկան 16 բանասերներ ինչպես ԵՊՀ-ից, այնպես էլ ՀՀ այլ բուհերից: Գիտաժողովի ընթացքում տեղի է ունեցավ նաև նախորդ՝ «Աբեղյանական ընթերցումներ»-2 գրքի շնորհանդեսը, որը լույս էր ընծայել ԵՊՀ հրատարակչությունը:
8. Ամբիոնի դասախոսների մեծ մասը ղեկավարել է ՈւԳԸ զեկուցումներ, վարել նիստեր, մասնակցել ԵՊՀ-ի կազմակերպած աշակերտական օլիմպիադային: Նշենք, որ շատ դասախոսներ մասնակցել են որակավորման բարձրագույն տարբեր դասընթացների:
9. Մայրենիի օրվան նվիրված միջոցառումների շարքում ամբիոնի աշխատակիցներ Ս. Գրիգորյանը՝ Սևանի Վազգենյան հոգևոր ճեմարանում, իսկ Ն. Պարոնյանը Գևորգյան հոգևոր ճեմարանում հանդես են եկել զեկուցումներով:

Ուսումնակրթական գործընթացին զուգահեռ՝ ամբիոնի դասախոսները հաշվետու ժամանակաշրջանում ծավալել են գիտահետազոտական ակտիվ գործունեություն՝ հանրապետության տարբեր հանդեսներում հրատարակելով գիտական 30 հոդված, որոնցից 3-ը՝ ՌԴ հանրագիտարանում:

Գիտության պետական կոմիտեի պայմանագրային /թեմատիկ/ ֆինանսավորման է արժանացել <<Գրաբարյան դարձվածքների ձևաիմաստային և կառուցվածքային քննություն>> գիտական թեման /ղեկավար՝ Ա. Աբաջյան, անդամներ՝ Ն. Դիլբարյան, Ա. Յուզբաջյան և Ք. Հարությունյան /հայցորդ//, որի իրականացման աշխատանքներին հեղինակներն արդեն ակտիվորեն ձեռնամուխ են եղել:

Ընդհանուր առմամբ կարող ենք արձանագրել, որ ամբիոնում տիրում է աշխատանքային ստեղծագործական աշխույժ մթնոլորտ:

Գիտական խորհուրդը դրական գնահատեց հայոց լեզվի պատմության ամբիոնի պրոֆեսորադասախոսական անձնակազմի կատարած աշխատանքները հաշվետու ժամանակահատվածում:

## **ԸՆԹԱՑԻԿ ՀԱՐՑԵՐՈՒՄ՝**

**ԼՍԵՑԻՆ.** – Գրականության տեսության և գրաքննադատության ամբիոնի դոցենտ, բ. գ. թ. **Աստղիկ Սարգսի Բեքմեզյանի՝** Ժ. 01.02 Նորագույն գրականության և գրականության տեսություն մասնագիտությամբ թեկնածուական ատենախոսություն ղեկավարելու թույլտվության հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** – Պրոֆ. պրոֆ. Ա. Ավագյանը, Ալ. Մակարյանը, Ժ. Քալանթարյանը, Ս. Մուրադյանը, դոց. Ա. Ջրբաջյանը:

Նշվեց, որ բ. գ. թ., դոցենտ Աստղիկ Սարգսի Բեքմեզյանը տարիներ շարունակ զբաղվել է գրականության տեսության և պատմության խնդիրներով, ունի գիտական շուրջ 30 հոդված և 4 մենագրություն: Նրա ղեկավարությամբ նաև հաջողությամբ պաշտպանվել են թեկնածուական ատենախոսություններ:

**ՈՐՈՇԵՑԻՆ.** – Միջնորդել ԵՊՀ ասպիրանտուրայի բաժին՝ ԲՈԿ-ին ներկայացնելու **Աստղիկ Սարգսի Բեքմեզյանին** Ժ. 01.02 Նորագույն գրականության և գրականության տեսություն մասնագիտությամբ թեկնածուական ատենախոսություն ղեկավարելու թույլտվության հարցը:

Վերջում նախագահողը շնորհակալություն հայտնեց բոլոր մասնակիցներին, ելույթ ունեցողներին, ցանկացավ ուրախ ու բարի Ամանոր, և գիտական խորհրդի նիստը համարվեց ավարտված:

**ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ**

**ՊՐՈՖ. Ա. ԱՎԱԳՅԱՆ**

**ԳԻՏՔԱՐՏՈՒՂԱՐ**

**ՊՐՈՖ. ԱԼ. ՄԱԿԱՐՅԱՆ**